*գաքների բնակիչներն են։ Երեւանը, որ ամենանշանաւոր քաղաքն է, ունի 11,463 բնակիչ, Նախիջեւանը՝ 2599 բնակիչ, Օրտուբաթը, որ նոր քաղաք է, 3444 բնակիչ։ Երկրագործ ընտանիքների թիւն է 24,906, բոլոր երեք երկրամասերում։ Վաչկատունները (նոմադ), որոնց թիւը առաջ 2,684 ընտանիք էր կազմում, այժմ իջել է 847 ընտանիքի։ Այսպիսով՝ երկրագործութիւնը շատ կարեւոր չափերով յետ է մղել վաչկատուն կենցաղավարութիւնը. մի պարագայ, որ արտակարգօրէն օրհնաբեր յառաջադիմութիւն եւ երաշխիք պէտք է սեպել հայոց աշխարհի քաղաքակրթութեան զարգացման համար։ Այս երկրամասի վրայ առաջ ապրող վաչկատուն իրդերը չուել են դէպի Պարսկաստան։ Նրանց փոխարէն եկել են վերոյիշեալ 67 եղիտի ընտանիքները։ Եւ որովհետեւ այդ արտագաղթած վաչկատունները երկրի համար մօտ 15,000 հոգու կորուստ են ներկայացնում, ուստի եւ այդ թիւը հանել պէտք է ներգաղթածների 57,226 թուից, որով ազգաբնակչութեան յաւելումը ըստ Շոպէնի, ընդամէնը 46,000 չունչ հաշուելու է։*

*«Նախկին բնակիչներից 10,413-ը քուրդ էին, Ղազախ*) — 8445, Այրումլի — 6807, թաթար — 1935 չունչ, ապա՝ մօտ 200 ընտանիք մուղանլի եւ այլ փչրանքներ ցեղային ուրիշ մնացորդների, որոնց թուին հաշուելու են նաեւ քեանդեաուլին՝ Նախիջեւանի երկրամասում, ընդամէնը 6473 չունչ։ Դրանք աչքի են ընկնում կապոյտ աչքերով եւ խարտեաշ մազերով։ Գնչուներ, որոնք մասամբ քրիստոնեայ են (այստեղ բոլշ են կոչւում) եւ մասամբ մահմետական, հաշւում էին մօտաւորապէս 50 ընտանիք քրիստոնեայ, 212 չնչով, 107 ընտանիք էլ մահմետական, 300 չնչով։ Նշանակում է՝ բոլոր գնչու ընտանիքների թիւն է 157, ընդամէնը 518 չնչով»։*

*Վերոյիշեալ վիճակագրական տեղեկութիւններին, որոնք Վագների գրքին կցուած «յաւելուած»ի առաջին հատուածն են կազմում եւ «ռուսական Հայաստանի բնակչութիւնը» վերնագիրը կրում (էջ 235–238), հետեւում է մի երկրորդ հատուած (էջ 239–250), որ ունի «Հայերի արտագաղթերը եւ նրանց ցրումը հին աշխարհում» վերնագիրը, եւ ուր հեղինակը մի համառօտ ակնարկ է նետում մեր հայրենիքի պատմական դժբախտ ճակատագրից բխող այդ — արտագաղթի — երեւոյթի վրայ, սկսած հնագոյն ժամանակներից մինչեւ այդ օրերը։*

*Որչափ եւ ինքնին հետաքրքիր են հայ գաղութների մասին Վագների գրած էջերը, բայց առանձին նորութիւն չեն պարունակում, ուստի եւ կանգ առնել չենք կարող նրանց վրայ։ Ուրիշներին ենք թողնում զբաղուել նաեւ այն հարուստ տեղեկութիւններով, որ Վագներ իր աշխատութեան մէջ տալիս է Հայաստանի բնութեան մասին ընդհանրապէս եւ նրա կենդանական ու բուսական աշխարհի շուրջը մասնաւորապէս։ Իր գրքին կցուած յաւելուածի երրորդ եւ ընդարձակ հատուածը եւս (էջ 251–331), որ կրում է «Հետազօտութիւններ Հայկական բարձրաւանդակի բնապատմութեան մասին» վերնագիրը, նուիրուած է նոյն այդ խնդիրներին։*

*Ինչպէս իր գրքի յառաջաբանի վերջում, այնպէս նաեւ այդ հատուածի ծանօթութեան մէջ Վ. ասում է, որ մտադիր է Հայաստանի բնապատմութեանը մի առանձին եւ միայն մասնագէտ ընթերցողների համար սահմանուած ուսումնասիրութիւն հրատարակելու։*

* * *

*Այժմ վերադառնանք Վագների ճամբորդութեանը դէպի Հայաստան, Արովեանի ուղեկցութեամբ, ու մտովին հետեւենք նրանց քայլերին։*

*Մեր ուղեւորների ճամբան Թիֆլիսից Երեւան ընկնում է Դիլիջանի եւ Սեւանի վրայով։ Առաջին օրը նրանք գիշերում են Թիֆլիսից ոչ հեռու գտնուող Կոդի գիւղում։ (Տեղափոխութեան միջոցը փոստային սայլակն է եղել։ Բացի Արովեանից՝ Վ. ունեցել է եւ մի ուրիշ ուղեկից, Բարոն Հ-Գ.)։ Երկրորդ օրը, դիմելով դէպի հարաւ, անցել են Ալգետն եւ Խրամը, որից յետոյ նրանց առջեւ բարձրացել է Լալվար սարը, որի ստորոտում այն ժամանակ էլ մշակւում էր պղնձի հանքը (Լօռիի,*

*) Շփոթելու չէ Կազակների (Kosak) հետ։ «Ղազախ» թաթարական ցեղային հատուած է, ինչպէս եւ միւսները։